ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վ.Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

Ես՝ Վաղինակ Ռոբերտի Նազարյանս, ծնվել եմ 1977թ. փետրվարի 23-ին Կիրովականում՝ բանվորի ընտանիքում: 1984-1994թթ. սովորել և ավարտել եմ Վանաձորի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1994-1998թթ. սովորել և ավարտել եմ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի կենսաբանության ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակության» բաժինը: Ուսմանը զուգընթաց զբաղվել եմ սպորտով՝ աթլետիկայով: Եղել եմ ՀՀ չեմպիոն և գավաթակիր, հանրապետության հավաքականի անդամ: 1998-1999թթ. ծառայել եմ ՀՀ ԶՈՒ, եղել եմ տանկային դասակի հրամանատար:

2001թ. սեպտեմբերից աշխատում եմ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի «Ֆիզիկական դաստիարակության տեսության և մաթոդիկայի» ամբիոնում՝ որպես «Աթլետիկա և դասավանդման մեթոդիկա» առարկայի դասախոս, 2004թ. «Ընդհանուր ֆիզիկական դաստիարակության» ամբիոնում՝ «ֆիզիկական դաստիարակություն» առարկայի դասախոս: 2003 -2005թթ. եղել եմ ՎՊՄԻ մարզական ակումբի նախագահ: 2012թ. դարձել եմ ՎՊՄԻ «Ընդհանուր ֆիզիկական դաստիարակության և ԱԻՀ» ամբիոնի ասիստենտ: 2013թ. պաշտպանել եմ թեկնածուական ատենախոսությունը և ինձ շնորհվել է մակավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2016թ.՝ դոցենտի գիտական կոչում: 2016թ. դարձել եմ Վանաձորի պետական համալսարանի «Ֆիզիկական դաստիարակության և ԱԻՀ» ամբիոնի ասիստենտ: 2019թ-ից ԿԳՄՍ նախարարության «Հանրակրթական դպրոցի կրթական չափորոշիչների» ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության խմբի փորձագետ: 2020թ-ի հուլիսից Արվեստի և սպորտի ամբիոնի վարիչի պաշտոնակատար: 2020թ. Արցախյան պատերազմի ընթացքում զորակոչվել եմ ՀՀ ԶՈՒ, եղել եմ դասակի հրամանատար: 2021թ. հուլիսից «Կրթական բարեփոխումների և վերապատրաստումների կենտրոնի» ղեկավար: Ունեմ տպագրված 14 գիտական աշխատանքներ: Ամուսնացած եմ, ունեմ երկու երեխա: